ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 105-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 100-Լ հրամանը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) դադարեցնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչություն» հավելվածների գործողությունը.

2) դադարեցնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարության փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչություն» հավելվածների գործողությունը.

3) դադարեցնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության կարևորագույն օբյեկտների պահպանության բաժին» հավելվածների գործողությունը.

4) Լրացնել նոր՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության քաղաքացիական և բնակչության պաշտպանության վարչություն» պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների.

5) «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչություն» պաշտոնների անձնագրերում կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածների.

6) «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչություն» պաշտոնների անձնագրերում կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածների:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

29.12.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ